

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

08-ր փետրվարի 2012թ.

գ. Ծակքար

2012թ. փետրվարի 08-ին Ծակքարի գյուղապետարանի դահլիճում տեղի ունեցավ համայնքի ղեկավար Գ. Ավետիսյանի հաշվետու ժողովը, որին մասնակցում էին համայնքի 31 ներկայացուցիչներ, ավագանու անդամներ: Ժողովին ներկա է նաև մարզպետարանի իրավաբանական բաժնի վարիչ՝ պարոն Դերենիկ Յովհաննիսյանը: Ժողովը նախագահում է համայնքի ղեկավարի տեղակալ Մ. Խլղաթյանը:

Նախ ողջունելով ժողովի մասնակիցներին պարոն Գ. Ավետիսյանը ներկայացրեց համայնքի 2011 թ. բյուջեի կատարողականը այնուհետև 2011 թվականին համայնքում իրականացված ծրագրերը և առաջիկա անելքները՝

2011 թ. բյուջեի մուտքերը կազմում է 41647.0 հազ. դրամ, նախատեսված 40543.0 հազ. դրամի դիմաց, այսինքն բյուջեն կատարվել է 102.7 %-ով, ըստ հարկատեսակների եկամուտները կազմում են.

1. հարկային եկամուտներ՝ 10286.0 հազ. դրամի դիմաց կատարվել է 10752.0 հազ. դրամ որից՝

ա) հողի հարկ 3376.0 հազ. դրամի դիմաց կատարվել է 3396.7 հազ. դրամ

բ) գույքահարկ 6737.5 հազ. դրամի դիմաց կատարվել է 7134.9 հազ. դրամ

գ) տեղական տուրքեր 173.0 հազ. դրամի դիմաց կատարվել է 220.4 հազ. դրամ

2. Ոչ հարկային եկամուտներ 1020.0 հազ. դրամի դիմաց կատարվել է 1226.4 հազ. դրամ որից՝

ա) Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական պահուստային հողերի վարձակալության դիմաց վարձավճարներ 760.0 հազ. դիմաց կատարվել է 766.5 հազ. դրամ:

բ) Այլ ոչ հարկային եկամուտներ՝

պատվիրակված լիզորություններ --600.0 հազ. դրամ, փաստացի կատարվել է

300.0 հազ. դրամ: Մնացորդ առ 01.01.2012 թ. դրությամբ կազմում է 7507.4 հազ. դրամ

որից ֆոնդային բյուջե 18387.5 հազ. դրամ:

Գյուղապետարանը 2011 թ. կատարված փաստացի ծախսերից չվճարված պարտքեր չեն եղել:

Նշվեց, որ 2011թ. հրավիրվել է 6 հերթական և 3 արտահերթ ավագանու նիստեր, որոնց ընթացքում քննարկվել է համայնքային և անհատ քաղաքացիներին վերաբերող տարաբնույթ հարցեր և ընդունվել 47 որոշումներ : Վերանայվել է համայնքի քառամյա ծրագիրը, որում կարևորվել և փոփոխվել են այն խնդիրները, որոնք ներկա փուլում առավել հրատապ լուծում են պահանջում:

Սահմանված գրաֆիկով իրականացվել է համայնքի բնակիչների ընդունելությունը և ըստ նրանց առաջարկությունների և դիմումների ընդունվել է համապատասխան որոշումներ: 2011թ. համայնքի ղեկավարին է դիմել 136 բնակիչ:

Աջակցել և համագործակցել է ոսիկանության հետ համայնքի տարածքում օրինականության և հասարակական կարգի պահպանության բնագավառում, որի արդյունքում 2011 թվականին համայնքում չի գրանցվել օրինախախտման ոչ մի դեպք:

Սահմանված կարգով վարել է համայնքի զինապարտների գրանցամատյանները, 100% - ով ապահովել է գարնանային և աշնանային զորակոչին, զորակոչիկների ներկայությունը:

Կառավարության սահմանված կարգով նախապատրաստել է համայնքի գլխավոր հատակագծի պատվիրման փաթեթը, որը իրականացել է 2011 թվականին:

Սահմանված կարգով տվել է շինարարության 9 թույլտվություն, հետևել է շինարարությունների իրականացմանը ըստ նախագծերի և իրականացրել փաստագրումները:

Միստենատիկաբար համայնքում իրականացվել է բնակավայրի սանիտարական բարեկարգումը և աղբահանությունը:

Համայնքի պահուստային վարելահողերից 27 հեկտարը տրվել է վարձակալության օրենքով սահմանված կարգով ,իսկ մնացածը վարձակալության չի տրվել հայտ չլինելու պատճառով:

2011 թվականին կապիտալ վերանորոգվել և կահավորվել է համայնքի գյուղապետարանի վարչական շենքը: Պահանջվող 20 մլն. դրամ գումարը որպես բարեգործություն տրամադրել է „Ավանգարդ Մոթորս,, ընկերությունը, որի սեփականատերերից է նաև Գ. Ավետիսյանը:

2012 թվականին հրատապ լուծում պահանջող խնդիրներից են՝

- ա) մտուր-մանկապարտեզի վերանորոգումը, որի համար առաջիկա ծրագրում նախատեսված է համայնքի բյուջեից ներդնել 14 մլն. դրամ: Նույն նպատակով հայտ է ներկայացվել ՀՀ կրթության և գիտության նախարարության ,, Կրթական ծրագրերի կենտրոն,, ԾԻԳ և ակնկալվում է ԾԻԳ - ից ևս 6 մլն. դրամի ներդրում:
- բ) ,,Կռաջներ,, թաղամասի էլեկտրական նոր ենթակայանի և նոր հոսանքագծերի կառուցում: Այս հարցի լուծման նպատակով համայնքի անունից դիմել ենք ,, Հայաստանի էլեկտրացանցեր,, ԲԲԸ-ի տնօրեն պարոն Բիբինին: Հարցին տրվել է դրական պատասխան, այժմ ընթանում են նախագծման աշխատանքները: Ներդրվող գումարի 10% -ը համայնքը վերցրել է իր վրա:
- գ) Հրատապ խնդիր է մշակույթի տան վերանորոգումը, սակայն գումարի բացակայության պատճառով հարցը բարձրացվել է ՀՀ Գեղարքունիքի Մարզպետարանի և Կառավարության առջև, 2012թ. ՀՀ Պետ. բյուջեից համապատասխան միջոցների հատկացման համար:
- Հատուկ ուշադրություն է դարձվել դպրոցի նյութատեխնիկական և կրթական խնդիրներին: Դպրոցի սոցիալապես անապահով երեխաների դասագրքերի վարձավճարները իր վրա է վերցրել գյուղապետարանը: Բանակցությունների արդյունքում ,,Ավանգարդ Մոթորս,, ընկերությունը խոստացել է փափուկ աթոռներ տրամադրել դպրոցի և մշակույթի տան դահլիճներին:
- Տարվա ընթացքում կազմակերպվել և իրականացվել են «Հայոց բանակի օր», «Մարտի8-ի տոն», «Հաղթանակի տոն», «Անկախության օր» և «Ամանօրյա տոն» միջոցառումները: Հաղթանակի տոնի կապակցությամբ պատերազմի վետերաններին մատուցվել են թանկարժեք նվերներ:
- Նշվեց, որ համայնքը աչքի է ընկնում ասֆալտապատ կենտրոնական ճանապարհով ու մայթերով (որը կառուցվել է «Ասիական բանկի» դրամաշնորհով) , փողոցային լուսավորությամբ, բարեկարգ ջրատար առուներով որոնք կառուցված են մետաղյա կիսախողովակներից, ինչպես նաև համայնքի բնակիչների գեղեցիկ ու ժամանակակից բնակարաններով:
- Համայնքը ամբողջությամբ ապահովված է ոռոգման ցանցով, գազաֆիկացված և էլեկտրոֆիկացված է, ապահովված է հեռախոսային կապով: 2010 թվականից գործում է բուժամբուլատորիան:
- Ձեկուցողը վերջում պատասխանեց համայնքի բնակիչներին հուզող մի շարք հարցերին: Եզրափակիչ խոսքով հանդեսն եկավ Մարզպետարանի իրավաբանական բաժնի վարիչ պարոն Ն. Ղազարյանը:
- Ժողովականները համայնքի ղեկավարի մեկ տարվա կատարած աշխատանքները գնահատեցին բավարար:

Ժողովի նախագահ՝

Մ. Խլղաթյան

Ժողովի քարտուղար՝

Ս. Խաչատրյան